# Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 2-ի թիվ 193 որոշման մեջ լրացում կատարելու մասին Կառավարության որոշման նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**« » ---------------- 20 թվականի N -Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 193 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ *Կառավարությունը որոշում է՝*

1. ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 2-ի Նոտարական գործողություններին մասնակցող թարգմանչին որակավորման վկայական տալու կարգը հաստատելու մասին թիվ 193 որոշմամբ հաստատված նոտարական գործողություններին մասնակցողթարգմանչին որակավորման վկայական տալու կարգում կատարել հետևյալ լրացումը.

1) լրացնել նոր՝ 7.2-րդ կետ.

«7.2. Ռազմական, արտակարգ դրության ժամանակ կամ այլ արտակարգ իրավիճակների պայմաններում տվյալ տարվա ընթացքում որակավորման ստուգում կարող է չանցկացվել: Կազմակերպված որակավորման ստուգումը կարող է հանձնաժողովի որոշմամբ հետաձգվել ռազմական, արտակարգ դրության ժամանակ կամ այլ արտակարգ իրավիճակների պայմաններում: Սույն դեպքում որակավորման ստուգումները մեկնարկում (շարունակվում) են որոշման կայացման համար հիմք հանդիսացած բոլոր հանգամանքները վերանալուց հետո հաջորդող մեկ տարվա ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից: